**Թեգարամա:**

<sup>d</sup>U<sup>URU</sup> Tegarama DINGIR LÚ<sup>MES</sup> DINGIR MUNUS<sup>MES</sup> HUR.SAG<sup>MES</sup> ÍD<sup>MES</sup>  
ŠA KUR<sup>URU</sup> Tegarama

«Թեգարամայի Ամպրոպի աստվածը, Թեգարամայի արական (և) իգական սեռի աստվածները, լեռները, գետերը»:

**Սամուխա** (ներկայացված է երկու առանձին ցուցակներով):

I. <sup>d</sup>Hebat<sup>URU</sup> Samuḫa DINGIR.LÚ<sup>MES</sup> DINGIR.MUNUS<sup>MES</sup> HUR.SAG<sup>MES</sup>  
ÍD<sup>MES</sup> URU<sup>URU</sup> Samuḫa

«Սամուխայի Խեբատը, Սամուխայի արական (և) իգական սեռի աստվածները, լեռները, գետերը»:

II. <sup>d</sup>IŠTAR.LÍL<sup>URU</sup> Samuḫa <sup>d</sup>BE-E-LA-AT A-YA-AK-KI <sup>d</sup>Aparaš ŠA  
URU<sup>URU</sup> Samuḫa DINGIR.LÚ<sup>MES</sup> DINGIR.MUNUS<sup>MES</sup> HUR.SAG<sup>MES</sup> ÍD<sup>MES</sup> ŠA  
URU<sup>URU</sup> Samuḫa

«Սամուխայի 'Ղաշտերի' Իշտարը, 'արդար տիրուհին', Սամուխայի Աբարան, Սամուխայի արական (և) իգական սեռի աստվածները, լեռները, գետերը»:

**Արծիյա:**

<sup>d</sup>ZABABA<sup>URU</sup> Arziya DINGIR.LÚ<sup>MES</sup> DINGIR.MUNUS<sup>MES</sup> HUR.SAG<sup>MES</sup>  
ÍD<sup>MES</sup> URU<sup>URU</sup> Arziya

«Արծիյայի Չաբաբան, Արծիյայի արական (և) իգական սեռի աստվածները, լեռները, գետերը»:

## KUB XXIII 72

Խեթական արքա Արնուվանդաս I-ի և Վերին Եփրատի ավազանի մեծաքանակ երկրների միջև կնքված պայմանագիր:

\*Չրատ.՝ Sayce, 1930, p.5ff. [թարգմ]; Gurney, 1948, p.32ff. [թարգմ]; Hoffner, 1976, p.60ff.[1684/ս կցաբեկորը]; Խաչատրյան, 1998, էջ.87-93 [հատված.թարգմ]; Քոսյան, 2002b, էջ.227[հատված.]:

Տեքստում ներկայացված են պայմանագրի կնքման նախօրեին վերիննեփրատյան մի շարք երկրների (Պախխուվա, Արխիտա) հակախեթական ապստամբության իրադարձությունները. թվարկվում են շուրջ երկու տասնյակ երկրներ և քաղաքներ: Այս կարևոր տեքստը թույլ է տալիս պատկերացում կազմելու վերիննեփրատյան տարածաշրջանի պատմական աշխարհագրության մասին: Ըստ էության, սա խեթական տեքստերի շարքում Իսուվայի և հարակից տարածքների վերաբերյալ տեղանվանական և անձնանվանական առավել մեծաքանակ նյութ պարունակող սկզբնաղբյուրն է:

Տեքստում հիշատակվող քաղաքները խմբավորված են հետևյալ կերպ.

1) Առնուվանդաս I-ի հետ պայմանագիր կնքող երկրներ, որոնք հիշատակվում են երկու տարբեր ցուցակներով - ա) ըստ երկրների և բ) ըստ դրանց կազմում գտնվող բնակավայրերի:

ա) երկրներ - Iṣuwa, Paḫḫuwa, Zuḫma, 𐎶[urri](?) (այս ընթերցումը կասկածելի է), Maldiya.

բ) բնակավայրեր - URUŠullama, URUZanzaliya, URULillima, URUHinzuta, URUWattarušna, URUA-an/ḫal-[.....], URUTaḫḫiša, URUAlatarma, URUPališna, [.....], URUMararḫa, URUTaḫišna, URUḪalma:

Երկրող ցուցակի բնակավայրերի մեծ մասը, հաշվի առնելով այլ տեքստերի նյութերը, պիտի գտնվեր Իսուվայում:

2) Պախխուվայի և նրա դաշնակիցների հարձակումներից տուժած տարածքներ - Iṣuwa, URUTimmiya, URUKummaḫa:

Ցուցակում ներառված երկրները, ըստ երևույթին, գտնվել են Պախխուվայի հարևանությամբ:

3) Պախխուվացիների կողմից խեթերից նվաճված բնակավայրեր - URUAparḫula, URUHurla, URUḪalmišna, URUPaḫḫura:

Նշված բնակավայրերը, ըստ տեքստի, պատկանել են Խաթթին: Սակայն դժվար է եզրակացնել բնակավայրերի իրական տեղադրության մասին, քանի որ պարզ չէ, արդյոք խեթական արքան նկատի ուներ բուն խեթական տարածքը, թե իրենից կախյալ վերիննեփրատյան երկրները (օրինակ, Իսուվան): Թեև, դատելով ըստ ամենայնի, այս քաղաքները կարող էին գտնվել հենց խեթական տարածքում: Այդ պարագայում սրանց հնարավոր տեղադրությունը կախված է Պախխուվայի դիրքից: Թե այն գտնվել է Իսուվայից արևելք, հյուսիս-արևելք (*Բյուրակնի* լեռների շրջանում – տես **Գլուխ 1. «Պախխուվա»**), ապա որպես խեթական տարածք կարող էր դիտվել *Եփրատից* հյուսիս ընկած շրջանը (օր., Կունմախայի մերձակայքում): Իսկ եթե Պախխուվան, ըստ գերիշխող տեսակետի, գտնվել է *Եփրատի* մեծ ոլորանի մոտ, ապա դրանք նպատակահարմար կլինի փնտրել այդ շրջանում, այսինքն,

Եփրատի և Չալխսի վերին հոսանքների միջև: Պախխուվայի տեղադրության առաջին տարբերակը թվում է առավել հավանական:

4) Պայմանագրում առկա պահանջների իրականացման երաշխավոր քաղաքները - <sup>URU</sup>Pittiyariga, <sup>URU</sup>Duggama:

Չաշվի առնելով այլ տեքստերի տվյալները, սրանք չեն գտնվել պայմանագիր կնքող երկրների տարածքում: Եթե Պիտտիյարիգան գտնվել է Չալխսի վերին հոսանքների շրջանում, ապա դժվար կլինի բացատրել դրա դերը որպես Պախխուվայի լոյալության երաշխավորի: Այս պատճառով, Պիտտիյարիգան անհրաժեշտ է փնտրել Եփրատի շրջանում: Ինչ վերաբերում է Դուզգամային (հայասական քաղաք), ապա դրա հարևանությունը Պախխուվային համահունչ է KUB XXIII 72-ի աշխարհագրությանը:

5) Պախխուվայի դաշնակիցը <sup>URU</sup>Arhita.

Սա ակնհայտորեն հայասական քաղաք է (տես KUB XXVI 39-ը ստորև):

### KUB XXVI 29 + KUB XXXI 55

«Միջին խեթական» փուլի (մ.թ.ա.XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) պայմանագիր է (CTH 144), ամենայն հավանականությամբ, կնքված Չայասայի Ուրա քաղաքի հետ (թերևս, պիտի թվագրվի Առնուվանդաս Ի-ի շրջանով):

\*Չրատ. Klengel, 1965, S.226ff.(հատված.); de Martino, 1996, p.73ff. Մասնագետների մի մասը հակված է այս Ուրան նույնացնելու Դաշտային Կիլիկիայի համանուն քաղաքի հետ (Laroche, 1958, p.270 n.8; idem, 1961, p.77; Otten, 1967, S.58ff.; Forlanini, 1988, p.146; de Martino, 1996, p.146 n.80; Bryce, 1999, p.154), սակայն ինչպես իրավացիորեն նշվել է (Kammenhuber, 1970, S.556f.), կիլիկյան քաղաքի մասին բոլոր վկայությունները վերաբերում են մ.թ.ա.XIII դարին, բացի այդ դրանք բացառապես բնութագրում են այն որպես առևտրա-արհեստագործական կենտրոն: Պիտի ավելացնել, որ KUB XXVI 29+KUB XXXI 55-ը հաթթիի հյուսիս-արևելյան և արևելյան ծայրագավառների բնակավայրերի (կասկեր, հայասացիներ, խուվացիներ) հետ կնքված զինծառայության մասին պայմանագրերի տիպիկ օրինակ է: Այս Ուրայի նույնացումը հայասական քաղաքի հետ՝ Houwink, 1970, p.68 n.78; Gurney, 1992, p.219 n.47; Klengel, 1999, S.119f.

Այստեղ անվանապես ներկայացված են Ուրա քաղաքի մի շարք բնակավայրեր՝ իրենց ներկայացուցիչներով հանդերձ, որի շնորհիվ պարզվում է, որ Ուրա քաղաքը «միջին խեթական» փուլում եղել է

հարակից բնակավայրերից քաղկացած մի փոքր քաղաքական միավոր: Ուրա քաղաքի, որպես Հայասայի տարածքում գտնվող կարևոր վարչաքաղաքական միավորի գոյությունը հաստատում է նաև KUB XLIX II տեքստը (տես ստորև):

Ուրայի բնակավայրերի ցուցակը - <sup>URU</sup>Ukšū, [.....]-u, [.-?]-x-x-ri-u, [.....-vš]ata, <sup>URU</sup>Iyaninna, [.....]-mitta, <sup>URU</sup>Huddu, [.....-i]šta, <sup>URU</sup>Lalatta:

### KUB XXVI 39

Այս բեկորային տեքստը խեթա-հայասական ինչ-որ պայմանագրի կնքմանը վկա աստվածների ցուցակն է (CTH 43):

\*Չրատ. Forrer, 1931, S.6f.; Haas, 1985b, S.24; Манандян, 1956, с.102.

Նախապես ենթադրվում էր, որ սա կարող է լինել Մուպպիլուլիունասս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրի մասը (օր., Götze, 1957, S.135 Anm.12; Хачатрян, 1971, с.148), սակայն այդ ցուցակում հիշատակվող խեթական աստվածների հերթականությունը եսկանորեն տարբերվում է առաջինի A տարբերակի ցուցակից (B տարբերակի համապատասխան մասը չի պահպանվել), որը հակասում է վերոհիշյալ տեսակետին: Ենթադրվում է, որ KUB XXVI 39-ը կարող էր կազմել Մուրսիլիս II-ի և Հայասայի արքա Աննիայի միջև կնքված՝ Խիստ տուժած պայմանագրի մասը (Carruba, 1988, S.69ff.): Պայմանագրից պահպանվել է երեք փոքր բեկոր (KBo XXVII 2; HT 85 և առայժմ չհրատարակված 905/z), որոնք ճանաչվել են որպես այդպիսիք Օ.Կարրուբայի կողմից (idem): Վերջինիս ենթադրությամբ, հնարավոր է, որ պայմանագրին պատկանի նաև KUB XL 41-ը):

KUB XXVI 39-ը միակ սկզբնաղբյուրն է, որտեղ հիշատակվում են Հայասայի մեծաքանակ բնակավայրերը (թվով 13)՝ համապատասխան աստվածությունների հետ միասին:

Հայասական քաղաքների ցուցակը - <sup>URU</sup>Patteu-[.....], <sup>URU</sup>Lahirhila, <sup>URU</sup>Qadmaša կամ <sup>URU</sup>Qadkusa (կարող է լինել նաև [.....-a]nzen[a], տես **Գլուխ I. «Qadmaša»**), <sup>URU</sup>Arniya, <sup>URU</sup>Kam?-[.....], <sup>URU</sup>Pahhuteya, <sup>URU</sup>Tamatta, <sup>URU</sup>Gazu-[...], <sup>URU</sup>Arhita, <sup>URU</sup>Duggamma, <sup>URU</sup>Parraya, <sup>URU</sup>Gašmiyaša, [.....]:

### KUB XXVI 62

Խեթական տերության հյուսիս-արևելյան շրջաններից (կասկերի գբաղեցրած տարածքը) և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից ծառայության վերցված զինվորների ցուցակ

\*Չրատ.՝ von Schuler, 1965, S.145; Քոսյան, 2004 (վերինեփրատյան շրջանի տեղանուններին վերաբերող հատվածի գիտ. տառադ., բարգմ. և մեկնաբ.):

Ցուցակը ըստ տեքստային հերթականության - <sup>URU</sup>Ha-x-[.....], <sup>URU</sup>Šala, <sup>URU</sup>Erhita, <sup>URU</sup>Litta, <sup>URU</sup>Temiya:

Տեքստը որոշակի հնարավորություններ է ընձեռում պարզելու ինչպես վերինեփրատյան տարածաշրջանի որոշ տեղանունների անվանումներ, այնպես էլ դրանց հարաբերական դիրքը, քանի որ դրանք թվարկվում են որոշակի աշխարհագրական հաջորդականությամբ (հյուսիսից հյուսիս-արևելք և արևելք):

Քանի որ Արխտան հայասական քաղաք է, իսկ Տեմիյան (այլ տեքստերի Տիմմիյա) պետք է գտնվեր Պախտուվայի, Կունմախայի, Արխտայի և Իսուվայի հարևանությամբ, սպա դրա համադրումը հետագա ժամանակների *Ցիմենուի* (ժաման. *Տիմիմ*) հետ կարող է նշել *Գայլ գետի* միջին և վերին հոսանքների շրջանը որպես այս տեքստից հղվող հատվածի տեղանունների հնարավոր տեղադրություն:

#### KUB XXXI 79

Պայմանականորեն «Գետային նավարկություն» կոչվող այս տեքստը նամակ է, առաքված խեթական արքային ինչ-որ պաշտոնյայից (CTH 214)

\*Չրատ.՝ Goetze, 1940, p.54f.; Cornelius, 1958a, S.373ff.; Hagenbuchner, 1989, Nr.90, S.136ff.; Lebrun, 1976, p.217f. և այլն):

Տեքստում նկարագրվում է Պիտտիյարիզայից նավակներով (կամ լաստերով) մինչև Սամուխա հացի առաքումը: Որպես միջանկյալ քաղաք նշվում է Արծիյան: Տեքստը որոշակի տեղեկություն է պահպանել գետի վերաբերյալ: Ասվում է, որ գետը որոշ հատվածներում ծանծաղ է և նավակները կարող են շրջվել:

Պիտտիյարիզայից Սամուխա գետային ճանապարհի առկայությունը կարևորագույն նշանակություն ունի ինչպես վերոհիշյալ երեք քաղաքների՝ միևնույն գետի մոտ գտնվելու տեսանկյունից, այնպես էլ կարող է հնարավորություն ընձեռել ճշգրտելու սրանց հետ այլ տեքստերում առնչվող շատ այլ քնակավայրերի մոտավոր տեղադրությունը: Մինչև 1960-ական թվականները այս նավարկելի գետը նույնացվում էր *Եփրատի* հետ, և Պիտտիյարիզան ու Սամուխան որոնում էին *Եփրատի* վերին հոսանքներից մինչև *Մալաթիա* ընկած հատվածում: Սակայն հետագայում, հաշվի առնելով գետի այս մասի՝ նավարկության համար հարմար պայմաններ չունենալու փաստը և

որոշ այլ փաստարկներ, առաջարկվեց *Չալիսի* թեկնածությունը, որն այսօր գերիշխում է մասնագիտական գրականության մեջ:

Առայժմ միայն վարկածային մակարդակով կարելի է առաջարկել Սամուխայի և տեքստերում այս քաղաքի հետ առնչվող այլ բնակավայրերի այլընտրական տեղադրություն *Եփրատի* կենտրոնից հարավ՝ արևմուտքից գետին հարող շրջանում: Խնդրի այսպիսի լուծման համար կարող է հիմք ծառայել անտիկ աղբյուրներում *Մալաթիայից* հյուսիս՝ *Եփրատից* քիչ արևմուտք հիշատակվող Սաբուս (*Sabus*) քաղաքի հիշատակությունը: Այս դեպքում հնարավոր կլինի Պիտոլյարիզան համադրել նույն աղբյուրների *Տեփրիկե* քաղաքի (*Teփrike* = հայկ. *Տսրիկ*, ժաման. *Դիվրիդի* [*պ-տ* դրափոխության արդյունքում]) հետ: Եթե այս մեկնաբանությունը որևէ հիմք ունի, ապա այս նույն շրջանում կարող էր գտնվել խեթ. *Էպիե-ն*, որը դեռ *Ջ.Գարստանգը* ժամանակին առաջարկել էր համադրել ժաման. *Կանգալի* հետ (տես **Գլուխ 1**): Պիտոլյարիզայի և Խալխսայի մերձակցությունը հենվում է Խաթթուսիի III-ի **Ինքնակենսագրության** համապատասխան հատվածի վրա (տես վերը):

## KUB XLIX 11

Գուշակային տեքստ, որի նպատակն է պարզել Ազգիի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվելիք) արշավանքի ընթացքը (CTH 577):

Տեքստում հիշատակվում են մի շարք տեղանուններ ինչպես *Չայասայի* (տեքստում՝ Ազգի), այնպես էլ դրան սահմանակից խեթական տարածքում, ընդ որում դրանց մի մասը նախկինում հայտնի տեքստերում վկայված չէր:

Ցուցակը - <sup>URU</sup>Haršalaša, <sup>URU</sup>Ištitina, [...]x-mušra, <sup>URU</sup>Tah(ha)nišara, <sup>URU</sup>Tawatena, <sup>URU</sup>Himmuwa, [...]-la, <sup>URU</sup>Utkuniša:

Այս տեքստի տեղեկությունները կարևոր են այն առումով, որ մեկ անգամ ևս ապացուցում են Ուրա քաղաքի տեղադրությունը *Չայասայի* և Խաթթիի միջև ընկած սահմանային գոտում, որ ենթադրվում էր Մուրսիլիս II-ի տարեգրությունների հիման վրա: Ըստ տեքստի, ռազմական գործողությունները սկսվում են Ուրային պատկանող բնակավայրերից:

Ազգիի դեմ կազմակերպված արշավանքին առնչվող բնակավայրերի շարքում նշված Իստիտինան կարող է վկայել այն մասին, որ 1) արշավանքն ընթացել է այն նույն ճանապարհով, ինչ ժամանակին Մուրսիլիս II-ի երկու արշավանքները ընդդեմ *Չայասայի*, 2)



հիշատակվող տեղանունները գտնվել են Խաթթիի և Ազգիի սահմանամերձ գոտում:

### KUB LIV 1 + 552/u

Խեթական բարձրաստիճան պաշտոնյայի (ամենայն հավանականությամբ, արքայատոհմի անդամ) գեկույցը Իսուվայում և հարակից տարածքներում կատարած իր գործունեության մասին (CTH 297.20):

\*Չրատ. Archi-Klengel, 1985, S.52ff; Քոսյան, 2002ա, էջ.326-327 (հատված. տառադ., թարգմ. և մեկնաբ.):

Տեքստը եզակի տեղեկություն է պարունակում Իսուվայի կարևորագույն քաղաքական և պաշտամունքային կենտրոն Սուլլամայի վերաբերյալ, որը կարող է պարզել վերջինիս մոտավոր դիրքը: Հիշատակվում է Իսուվայի Սուլլամա քաղաքում Տարուպսանի աստծուն տրված երկրագությունը, ինչպես նաև տեղեկություն Սուլլամա լեռան վերաբերյալ:

20') ..... ID<sup>III A</sup>-ya-wa-kán ku-i-e-eš

21') [.....] UR.SAG<sup>5</sup> Su-ul-la-[a]m-ma pa-ra-a ar-ša-an-zi

22') [nu-wa-r]a-at GIM-an Ú-[U]L ta-ru-up-pa-an-ta-ri

20') «.....» եվ գետերը, որ

21') [.....] Սուլլամա լեռից ներքև են հոսում,

22') [և] երբ (գր. «ինչպես» - Ա.Բ.) դրանք չ[են] միանում ....»:

Շարադրանքի ոճը թույլ է տալիս տեքստը դասելու «Դատական պրոցես» պայմանական անվանումը կրող տեքստերի շարքին:

Կարելի է ենթադրել, որ Սուլլամա քաղաքը գտնվել է համանուն լեռան մոտակայքում, որից սկիզբ են առել մի շարք գետեր:

### KUB LVI 40

Պատկանում է խեթական սեպագիր տեքստերի կորպուսում լավ վկայված ծիսական ինվենտարը ներկայացնող տեքստերի շարքին:

\*Չրատ. Քոսյան, 2002ա, էջ.316-322.

Այս տեքստերը է.Լարոշի կատալոգում (CTH) ցրված են տարբեր բաժիններում (Nrs.501-530): Դրանց մի մասի հրատարակությունը և հետազոտությունը՝ Carter, 1962:

Հիշատակվում են Իսուվայի (և վերջինիս հարևան շրջանների?) քաղաքների աստվածներին տրվող մատուցումները:

Տուցակը – UR.SAG<sup>5</sup> Wanzapanda (լեռ), UR.SAG<sup>5</sup> Pupara (լեռ), URU<sup>1</sup> Wattarušna, URU<sup>1</sup> Kardušša, [...-t]i?-iššana (հնարավոր է, դիցանուն է), URU<sup>1</sup> Artašušša.

Դատելով տեքստից, այստեղ, հաստատապես Իսուվայում գտնվող Վատարունա քաղաքից զատ հիշատակվող տեղանունները (քաղաքներ և լեռներ) նույնպես կարող էին գտնվել Իսուվայում: Տեղանունների տեղայնացման համար որևէ կովան տեքստը չի պարունակում:

## KBo VI 28 + KUB XXVI 82

Խաթթուսիլիս III-ի «Չրովարտակը» Պիրվա աստծո կեւր տաճարը հարկերից ազատելու մասին (CTH 88 [+ KUB XXVI 82]):

\*Չրատ. Forrer, 1926a, S.35f. (ԴԿ 6-18); Götze, 1940, p.21ff. (ԴԿ 6-15); Манандян, 1956, с.78; Cornelius, 1958a, S.237f. (ԴԿ 6-18); Imparati, 1977, p.39ff. (ԴԿ 18-31, 39-42); Խաչատրյան, 1998, էջ 53 և այլն): Չիշատակվում է արքայի նախորդներից մեկի օրոք (մասնագետները համակարծիք են այս իրադարձությունը Թուրխալիյաս III-ի շրջանով թվագրելու հարցում [Forrer, 1931, S.4; Götze, 1940, p.23ff.; Güterbock, 1956, p.119f.; Bryce, 1999, p.159 և այլն], քանի որ նման իրավիճակ է արձանագրված Սուպպիլուլիումաս I-ի գործունեությանը նվիրված ընդարձակ տեքստի առաջին մասում, որտեղ շարադրված է Թուրխալիյասի կառավարման վերջին շրջանը [Güterbock, 1956, p.59ff.]) Խաթթիի վրա բոլոր հարևան երկրների հարձակման մասին:

Տեքստում ասվում է, որ

1) Ազգին նվաճել էր «Վերին երկիրը»՝ սահման դարձնելով Սամուխա քաղաքը:

2) Իսուվան նվաճել էր Թեգարամա երկիրը:

3) Արմատանան նվաճել էր խեթական տարածքը և սահման էր դարձրել Կիցցուվատնան:

Տեքստը թույլ է տալիս պարզելու սույն ժամանակաշրջանում վերինեփրատյան երեք երկրների (Ազգի, Իսուվա և Արմատանա) մոտավոր տարածքը (ավելի ճշգրիտ՝ Խաթթիի համապատասխան շրջանների հետ ունեցած սահմանը):

## IBoT II 129

Գուշակային հարցման տեքստ է (CTH 574), որտեղ ներկայացված են Խաթթիի տարբեր բնակավայրերում գտնվող աստվածների տաճարներին տոնակատարությունների ժամանակ մատուցվող նվիրատվությունների հարցում հայտնաբերված թերացումների պատճառները: Չայտնվում է այն մասին, որ նախկինում աստծուն մատուցումներ էին կատարում Իսուվայի Կուվարպիսա քաղաքի

բնակիչները, սակայն այժմ նրանք թերացել են և այդ պարտականությունը իր վրա է վերցրել Իսուվայի արքան: Այս տեղեկությունը թույլ է տալիս Կուվարպիսա քաղաքը վստահորեն տեղադրելու Իսուվայում:

## II

**KBo I 3** (CTH 52. հրատ.՝ Weidner, 1923, S.36ff.(աքք. տարբերակը); Friedrich, 1924, S.119ff. (խեթ. տարբերակը); Beckman, 1996, Nr.6B, p.44ff. (թարգմ.))

Պայմանագիր Միտաննիի արքա Շաուտիվազայի և Սուպպիլուլիումաս I-ի միջև: Որպես պայմանագրի կնքման վկաներ հիշատակվում են Սամուխայի Ամպրուպի և Աբարա, ինչպես նաև Արծիյայի Ջաբաբա (ռազմի աստվածը) աստվածները: Հիշատակվում է այն մասին, որ Միտաննիի արքա Շուտտարնան Ալզիին էր հանձնել արքայական գանձատանը պահվող գանձերը, նաև խուրրիական ազնվականներին:

**KBo I 4** (CTH 53. հրատ.՝ Weidner, 1923, S.58ff.; del Monte, 1986, S.142ff.; Beckman, 1996, Nr.7, p.50ff. [վերջինս՝ թարգմ.]):

Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Նուխաշշեի արքա Տետտեի միջև: Ասվում է, որ Իսուվան նվաճելուց հետո խեթական արքայի գորքը *Քաշիյարի լեռների* շրջանում հարձակման էր ենթարկվել ալզեցիների կողմից: Որպես պայմանագրի կնքմանը վկաներ հիշատակվում են Սամուխայի և Պիտտիյարիգայի Ամպրուպի աստվածները, Արծիյայի ռազմի աստվածը և Սամուխայի Աբարան:

**KBo I 5** (CTH 41. հրատ.՝ Weidner, 1923, S.88ff.; Götze, 1924a, S.11ff; del Monte, 1981, p.215ff.; Beckman, 1996, Nr.2, p.17ff. (թարգմ.)); Altman, 2000, 122ff. (հատված. թարգմ.): Մինչև 1980-ական թվականները այս պայմանագիրը կնքող խեթական արքան համարվում էր Սուպպիլուլիումաս I-ը: Թուրխալիյաս I(II)-ին վերագրելու օգտին տես Beal, 1986, p.424ff.; Wilhelm, 1988, S.359ff. և այլն [սակայն տես Houwink, 1998, p.34ff. և Taracha, 1997, S.74ff. հօգուտ Թուրխալիյաս III-ի]:

Պայմանագիր Թուրխալիյաս I(II)-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև: Հիշատակվում է խեթական արքայի կողմից Իսուվայի նվաճումը, որտեղից բնակչության մի մասը հեռացել էր Խուրրի երկիր (Միտաննի):

**KBo I 58 (CTH 238)**

Բնակավայրերի ցուցակ ներկայացնող տեքստի բեկոր (բնույթը պարզ չէ): Ցուցակում, Սամուխան ընդգրկող հատվածը այսպիսին է՝ Նենիսանկուվա, Ադունուվա, Ապցինա, Սարիսսա, Սամուխա: Այս տեքստը մեկն է Սամուխան, հետևաբար նաև Պիտտիյարիզան և Արծիյան Հալիսի շրջանում տեղադրելու համար հիմք հանդիսացող փաստարկներից (ցուցակի հետազոտությունը՝ Forlanini, 1980, p.71ff.):

**KBo II 1 (CTH 509, հրատ.՝ Hrozny, 1919, S.1ff.; Carter, 1962, p.51ff.)**

Ինվենտարային տեքստ, որտեղ հիշատակվում է *huwaši* կոչվող սրբավայրում պահվող <sup>URU</sup>Haršalašši քաղաքի Ամպրոպի աստծո արծանը:

**KBo II 9 + KUB XV 35; KBo XXXIV 91 (CTH 716. մասնակի հրատ.՝ Sommer, 1920, S.85ff.; Haas – Wilhelm, 1974, 57ff.; Archi, 1977, p.298ff.; Բոսյան, 2002b, էջ.230-231):**

«Նիմվեի Իշտար աստվածուհու ծեսը»: Ի թիվս հաթթիի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող կամ չգտնվող մեծաքանակ երկրների, հիշատակվում են Ալզին, Պապանիսին (= Պապիսի), [Իսուվան?], Կունմախան և Հայասան:

**KBo III 46 (CTH 13, հրատ.՝ Forrer, 1926b, N.17A [տառադ.])**

Խուրրիների դեմ Մուրսիլիս I-ի մղած պատերազմները նկարագրող տեքստ: Հիշատակվում է Իսուվայի հատրա քաղաքը:

**KBo IV 6 (CTH 380, հրատ.՝ Friedrich, 1946, S.43 (հատված.տառադ.); Tischler, 1981 [ամբողջ.])**

Լելվանի աստծուն ուղղված Մուրսիլիս II-ի աղոթքը կնոջ՝ Գասսուլիյափիյայի հիվանդության կապակցությամբ: Հիշատակվում է Սամուխա քաղաքում թագուհու տեսած երազը:

**KBo IV 10 (CTH 106, հրատ.՝ den Hout, 1995; Beckman, 1996, Nr.18B, p.104ff. [ամբողջ.]; Korošec, 1942, p.53ff.; Forrer, 1926a, S.6ff., Hoffner, 1989, p.199ff.; [հատված.] և այլն):**

Պայմանագիր հաթթուսիլի III-ի և Թարխունտասսայի արքա Ունի-թեշուբի միջև: Պայմանագրի կնքմանը վկա աստվածների շարքում հիշատակվում է Սամուխայի Ամպրոպի աստվածը:

**KBo IV 13 + KUB X 82 (CTH 625)**

Տեքստում վկայված բնակավայրերի ցուցակի հետազոտությունը՝  
**Götze, 1930a, S.20ff.; Bossert, 1944, S.28ff.; Cornelius, 1955, S.54ff.** և այլն:

AN.TAH.ŠUM կոչվող ամենամյա գարնանային տոնակատարությանը նվիրված տեքստ: Հիշատակվում են Հայասայի<sup>4</sup> U.GUR աստվածը, Պիտտիյարիգայի Ամպրոպի աստվածը, Արծիյայի, Սամուխայի, Խատրայի և Սինուվայի «աստվածները»: Թվագրվում է Թուդխալիյաս IV-ի շրջանով (XIIIդ. երկրորդ կես):

**KBo IV 14 (CTH 123 (+ KUB XL 38?).** հրատ.՝ **Stefanini, 1965, p.39ff.** տեքստի այն հատվածը, որտեղ ենթադրվում է խեթական արքայի հետ պայմանագիր կնքող արքայի անունը, կորսված է: Իսուվայի արքայի հետ նույնացումը՝ **Meriggi, 1962, S.85** (նաև՝ **Singer, 1985, p.110ff.; RGTC 6.1, S.7**); սակայն հմնտ. **Stefanini, 1965, p.50ff.** (խեթական պաշտոնյա): Թվագրումը Թուդխալիյաս IV-ի շրջանով՝ **Singer, 1985, p.109ff.**):

Պայմանագիր, կնքված Թուդխալիյաս IV-ի և Իսուվայի արքայի միջև: Երկու հատվածներում հիշատակվում են Ատրեստանի դեմ մղված ճակատամարտերը, համապատասխանաբար՝ Նիխրիյայի և Ալաթարմայի մոտ (հնարավոր է, խոսքը միևնույն իրադարձության մասին է):

**KBo V 3; KBo XXII 40 (CTH 42.** հրատ. և տեքստի կառուցվածքը տես՝ **Friedrich, 1930, S.103ff.; Beckman, 1996, Nr.3, p.22ff.** [թարգմ]; **Մարտիրոսյան, 1957, էջ.104-107** [թարգմ.]; **Խաչատրյան, 1998, էջ.48-50, 59-67**[հատված.]):

Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրի հիմնական տեքստը և դրա B տարբերակի մի բեկորը: Որպես պայմանագրի կնքմանը վկաներ հիշատակվում են Սամուխայի և Պիտտիյարիգայի Ամպրոպի աստվածները, Արծիյայի Չաբաբան, Սամուխայի Աբարան:

**KBo V 9 (CTH 62.** հրատ.՝ **Weidner, 1923, S.76ff.** [աքք. տարբերակը]; **Friedrich, 1926, S.1ff., 179ff.** [խեթ. տարբ.], **del Monte, 1986, p.156ff.** [երկու տարբերակները]; **Beckman, 1996, N.8, p.54ff.**[թարգմ.]):

Պայմանագիր Մուրսիլիս II-ի և Ամուրրուի արքա Դուպպի-թեշուբի միջև: Որպես պայմանագրի կնքմանը վկաներ հիշատակվում են Սամուխայի և Պիտտիյարիգայի Ամպրոպի աստվածները, Արծիյայի Չաբաբան, Սամուխայի Աբարան:

**KBo VI 2, 3, 4, 6 (CTH 291. հրատ.՝ Friedrich, 1959; Imparati, 1964, p.70ff.; Hoffner, 1997, p.65f.)**

Խեթական օրենքները: Նշվում է, որ նախկինում Խատրայի, Մանդայի, Սալայի, Տամալկիայի և Խիմնուվայի գինվորները ազատված էին *šahyan* և *luzzi* կոչվող պարհակներից: Հիշատակվում է տեքստը արձանագրող գրչի նախնիներից մեկը, որը ծագումով Վերին երկրից է եղել:

**KBo VI 29; KUB XXI 15; KUB XXIII 127 (CTH 85. հրատ.՝ Götze, 1925, S.47ff.; 1930d, S.46ff.)**

Խաթթուսիլի III-ի և Ուրխի-թեշուրի հարաբերությունները նկարագրող տեքստեր: KBo VI 29-ը արքայի «Ինքնակենսագրության» զուգահեռ տարբերակն է: Հիշատակվում են Վերին երկիրը (որտեղ Խաթթուսիլիսը կառավարում էր մինչև արքա դառնալը) և արքայի հովանավոր Սամուխայի Իշտարը:

**KBo VII 14 + KUB XXXVI 100 (CTH 15. հրատ.՝ Otten, 1953b, S.60ff.; Miller, 1999, p.46 [վերջինը՝ թարգմ.]):**

Խաթթուսիլի I-ի սիրիական պատերազմները նկարագրող տեքստերից մեկը («Հալեպի զորավար Ցուկրաշի» պայմանական անունը կրող տեքստերից): Վնասված ենթատեքստում հիշատակվում է Խեմնուվա քաղաքը:

**KBo VIII 23 (CTH 209.7. հրատ.՝ Singer, 1985, S.116ff.; Hagenbuchner, 1989, Nr.48, S.80f.)**

Նամակ, առաքված խեթական պաշտոնյայի կողմից՝ խեթական թագուհի Դուդուխեպային: Ասվում է այն մասին, որ Իսուվայի արքան դավաճանել է խեթական արքային, որը այդ պահին գտնվում էր Արցախայում (արևմտյան Փոքր Ասիա):

**KBo VIII 30 (CTH 297.15)**

«Դատական պրոցես»: Խեթական արքային ներկայացված ինչ-որ անձնավորության զեկույցը: Հիշատակվում են Իսուվայի արքա Ալի-շարրուժան, Բենտեշինան (Ամուրրուի արքան), Տուլպի-շարրուժան, Kurunta-DINGIR-ը: Այս անձնանունները վկայում են այն մասին, որ խեթական արքան Խաթթուսիլի III-ն է:

**KBo VIII 55 (CTH 571. հրատ.՝ Schuol, 1994, S.122ff.; Klinger, 1998, S.104ff.)**

Գուշակային տեքստ: Հարցման առարկան Իսուվայուն պատահած ինչ-որ իրադարձություն է, որն անհանգստություն է պատճառել խեթական արքային:

**KBo VIII 57 (CTH 582. հրատ.՝ Lebrun, 1976, p.196f.)**

Գուշակային տեքստի բեկոր: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը:

**KBo IX 138 (CTH 235)**

Պատկանում է AN.TAḪ.ŠUM տոնակատարությունը նկարագրող տեքստերի շարքին (տես **KBo IV 13 + KUB X 82**).

**KBo X 1; KBo X 2 (CTH 4. հրատ.՝ Imparati - Saporetti, 1965, p.40ff.; Houwink ten Cate, 1984, p.47ff.; Miller, 1999, p.24ff.)**

Հին թագավորության արքա Խաթթուսիլի I-ի գործունեությունը նկարագրող տեքստերից մեկը: Հիշատակվում են Պուրատտու գետը (խեթ. տարբերակում՝ Մալա) և Խախխում քաղաքը (խեթ. Խախխա):

**KBo X 12 (CTH 49. հրատ.՝ Weidner, 1923, S.70ff.; Klengel, 1964, S.437ff.; Beckman, 1996, p.32ff. (թարգմ.))**

Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Ամուրրուի արքա Ազիրուի միջև: Ալզին թվարկվում է որպես Խաթթիին թշնամի երկիր (Եգիպտոսի, Միտաննիի, Ասորեստանի հետ միասին):

**KBo X 18 (CTH 626. հրատ.՝ Lebrun, 1976, p.179ff.)**

Արքայի և թագուհու կողմից տարեվերջին նշվող nuntariyašha կոչվող տոնակատարությունը նկարագրող տեքստ, որը նվիրված է Սամուխայի Իշտարին:

**KBo X 47g (CTH 341. հրատ.՝ Otten, 1958b, S.93ff.; Laroche, 1968, p.7ff.)**

Գիլգամեշի մասին էպոսի խեթերեն թարգմանության առաջին աղյուսակի տարբերակներից մեկը: Նշվում է, որ դեպի «Մայրիների լեռներ» (= Լիբանան) ճանապարհին Գիլգամեշը երկրպագություն է կատարել Մալա գետի ափին:

**KBo XI 22 (CTH 656. հրատ.՝ Lebrun, 1976, p.181ff.)**

Երկրպագություն տարբեր աստվածների: Հիշատակվում է Սամուխայի Աբարան:

**KBo XI 28; KUB XX 26 (CTH 711. հրատ.՝ Lebrun, 1976, p.151ff.)**

Սամուխայի Իշտարին նվիրված աշնանային ծեսի երկու զուգահեռ տարբերակները:

**KBo XI 40 (CTH 682. հրատ.՝ McMahon, 1991, p.120ff.)**

Խաթթիի Պահապան աստվածներին տրվող երկրպագությունների ցուցակ. հիշատակվում է Մալա գետը, նաև Վերին երկիրը, որտեղ արքան, ըստ տեքստի, սովորաբար որսորդությամբ էր զբաղվում:

**KBo XII 67 + KUB XXXI 60 (CTH 237)**

«Անծանց ցուցակ»: Բեկորային վիճակում է. հիշատակվում են «երգչուհիներ», որոնք տրվել են անվանապես նշվող անծանց: Թերևս, նրանցից մեկը բերվել էր Արմատանայից:

**KBo XII 100 (CTH 470)**

Ծիսական բնույթի տեքստի բեկոր: Հիշատակվում է Մալա գետը:

**KBo XII 136 (CTH 664)**

Աստվածների ցուցակ կամ ծեսի նկարագրություն: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը:

**KBo XII 140 (CTH 521.7)**

Տեքստում նկարագրվում են Խաթթիի տարբեր բնակավայրերի աստվածությունները: Իսուվայի արքան հիշատակվում է որոշ բնակավայրերի աստվածությունների պաշտամունքի հարցում պարտականություններ ունենալու առնչությամբ:

**KBo XIII 225 (CTH 213. հրատ.՝ Lebrun, 1976, p.219f.)**

Աստվածների ցուցակ: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը՝ <sup>d</sup>LIŠ ձևով:

**KBo XIII 263 (CTH 770)**

Լուվիերեն տեքստի բեկոր: Հիշատակվում է Մալա գետը (<sup>10</sup>Ma-a-[la]):

**KBo XV 62 (CTH 786. դիցանունների ցուցակի ուսումն.՝ Güterbock, 1961b, p.3ff.)**

Խուրրիական ծագման (h)išwa կոչվող ծիսակատարությունը ներկայացնող տեքստ: Ի թիվս մեծաքանակ լեռնանունների և գետանունների, հիշատակվում է Տիգրիս գետը:



**KBo XVI 20 (CTH 211.25?)**

Անհայտ պատկանելության պատմական բնույթի տեքստի բեկոր, որտեղ պահպանվել են միայն տողավերջի որոշ նշաններ: Ըստ Ա.Կամմենհուբերի, Մուրսիլիս II-ի «Տարեգրությունների» մասը կարող էր կազմել (Kammenhuber, 1970, S.550): Հիշատակվում են Իսուվան և Ամբարան:

**KBo XVI 32 (CTH 212)**

Երկվեզվյան (խեթերեն և աքքադերեն) անհայտ պայմանագրի բեկոր: Հիշատակվում է Եփրատ գետը՝ <sup>10</sup>BURANUM.ME գաղափարագիր գրությամբ:

**KBo XVI 36 + KUB XXXI 20 (CTH 83)**

Խաթթուսիլի III-ի տեքստը Սուպպիլուլիումայ I-ի արշավանքների մասին: Նշվում է Սամուխայի Իշտարի աջակցությունը արքային:

**KBo XVI 41 + KUB LX 61 (CTH 214.13)**

Խեթա-իսուվական խիստ տուժած պայմանագրի բեկորներ: Հիշատակվում է Իսուվայի արքայի և նրա հոր գործունեությունը:

**KBo XVI 42 (CTH 214.13. հրատ.՝ Klengel, 1976, S.85f.[հատված.])**

Ըստ հրատարակչի, սա խեթական պաշտոնյայի նամակ-զեկույցն է արքային՝ Իսուվայում տիրող իրավիճակի մասին, որտեղ, վնասված ենթատեքստում, հիշատակվում են մի շարք իսուվական քաղաքներ (Aribuwa, Hatima, Hinzuta, Manzana, Mezzari, Sinuwa):

**KBo XVI 45 (CTH 832)**

Է.Լարոշի «Կատալոգում» նշված է որպես «Անհայտ բնույթի տեքստ»: Խեթա-հայասական՝ առայժմ չթվագրված պայմանագիր: Ներկա ժամ. հոգն. II դեմքը, որով խեթական արքան դիմում է հայասացիներին, վկայում է հոգուտ վաղ թվագրման՝ առնվազն Թուդիսալիյաս III-ով (նման է «Մարիյա + Հայասայի ժողովուրդ» պայմանագրին [= «ՍԽ» պայմանագրի IV սյունակը]):

**KBo XVI 52 (CTH 577)**

Գուշակային տեքստ, որը ներառում է գուշակության երեք տարբեր տիպեր (KUŠ, KIN, MUŠEN): Գուշակությունն ընդգրկում է Մալա գետի անվան հետ կապվող գործողություն:

**KBo XVI 83 (CTH 242)**

Իշտար աստվածուհուն նվիրաբերվող իրերի (մետաղյա առարկաներ, զենք) ինվենտարային տեքստ. հիշատակվում են Վերին երկրի ազնվականները (LÚ<sup>MEŠ</sup> GAL):

**KBo XVI 97 (CTH 571. հրատ.՝ Schuol, 1994, S.102ff.; Lebrun, 1976, p.198 [հատված.])**

Գուշակային տեքստ: Հիշատակվում է Սամուխայի «Աս աստվածությունը» (DINGIR.GE<sub>6</sub>), ինչպես նաև թագուհու հնարավոր այցը Սամուխա («Երբ Սամուխայի Աս աստվածը այսպես ասի, թագուհին թող Սամուխա գնա»):

**KBo XVII 79 (CTH 664. հրատ.՝ Lebrun, 1976, p.183)**

Տարբեր աստվածներին մատուցվող երկրպագությունների ցուցակ: Հիշատակվում է Սամուխա քաղաքը՝ URUŠapuha ձևով:

**KBo XVII 89 + KBo XXXIV 203 (CTH 664)**

Աստվածների ցուցակ կամ ծես:

**KBo XVIII 4 (CTH 188.1. հրատ.՝ Klengel, 1976, S.86f.; Hagenbuchner, 1989, S.181f.)**

Իսուվայի արքայի նամակը՝ ուղղված խեթական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյային (LÚ GAL QARTAPPI): Նամակում դիմելու ոճը («իմ սիրելի հայր») չի բացառում, որ Իսուվայի արքան կարող էր այս պաշտոնյայի որդին լինել:

**KBo XVIII 24 (CTH 187.2. հրատ.՝ Otten, 1968-69, S.112f.; Hagenbuchner, 1989, Nr.188, S.241ff.)**

Խեթական արքայի նամակը Ասորեստանի արքա Սալմանասար I-ին: Երկու պետությունների միջև սահմանամերձ գոտում տեղ գտած լարված հարաբերությունների ենթատեքստում հիշատակվում է Մալիտիյա քաղաքը:

**KBo XVIII 50 (CTH 188. հրատ.՝ Hagenbuchner, 1989, Nr.62, S.96ff.)**

Խեթական արքային առաքված ինչ-որ պաշտոնատար անձի նամակը: Հիշատակվում է Ամբարա քաղաքից տեղահանված բնակչության մասին: Թվագրվում է Մուվատալլիս II-ի կամ Խաթթունիլի III-ի շրջանով (Hagenbuchner, 1989, S.97):

**KBo XIX 128 (CTH 625).** հրատ.՝ **Otten, 1971; Alp, 1983, S.164ff.)**

AN.TAĜ.ŠUM տոնակատարությանը նվիրված տեքստ. հիշատակվում է Չայասայի U.GUR աստվածը: Թվագրվում է Թուրխալիյաս IV-ի շրջանով (XIII դ. երկրորդ կես):

**KBo XX 94 (CTH?)**

Ծիսական տեքստի փոքր բեկոր. հիշատակվում են Խախսայի բնակիչները:

**KBo XX 129 (CTH 777.** հրատ.՝ **Haas, 1980, S.107f.[հատված.]**)

Խուրրիերեն ծիսական տեքստ. հիշատակվում են Տիգրիսը և Եփրատը:

**KBo XXI 26 (CTH 664.** հրատ.՝ **Lebrun, 1976, p.220 [հատված.]**)

Աստվածների ցուցակ: Չիշատակվում են Մամուխայի և Պիտտիյարիգայի Ամպրոպի աստվածները՝ <sup>d</sup>IM գրությամբ:

**KBo XXII 22 (CTH 215)**

Պատմական բնույթի տեքստի բեկոր, որտեղ Իսուվան հիշատակվում է, ի թիվս մի շարք երկրների (Išua, Zazziša, Zullapa, Pala(-))[], Kaz-[...])՝ ռազմական գործողությունների ենթատեքստում: Ըստ Մ.Ֆորլանինի (**Forlanini, 1979, p.173 n.36**), հիշեցնում է Սուպիլուլիումաս I-ի և Միտաննիի արքա Տուշրաթթայի միջև կնքված պայմանագրի պատմական ներածականը:

**KBo XXII 39**

Սուրսիլիս II-ի և Ամուրրուի արքա Ղուպպի-թեշուբի միջև կնքված պայմանագրի մասը (տես վերը՝ **KBo V 9**):

**KBo XXII 47 (CTH 664.** հրատ.՝ **Lebrun, 1976, p.220f.)**

Աստվածների ցուցակ: Չիշատակվում է Մամուխայի Իշտարը՝ <sup>d</sup>LIŠ գրությամբ:

**KBo XXII 264 (CTH 577.** հրատ.՝ **Heinhold-Krahmer, 1988, S.99ff.)**

Գուշակային հարցում, որտեղ հիշատակվում է այդ տարի Մալիտիյայի վրա Ասորեստանի արքայի հնարավոր արշավանքը (Խաթթուսիլի III կամ Թուրխալիյաս IV):

**KBo XXIII 115 (CTH 212?)**

Պատմական բնույթի տեքստ. պահպանվել է մի ոչ մեծ բեկոր (11 տող): Հնարավոր է, պայմանագիր է կամ հրահանգ՝ տրված սահմանային կառավարչի կամ որևէ այլ պաշտոնյայի: Տեքստում հիշատակվում են «Ազգիի սահմանը», «նենգ մարդիկ» արտահայտությունները: Ակնհայտորեն, մ.թ.ա.XIII դարի տեքստ է:

**KBo XXIV 132 (CTH 525?)**

Պաշտամունքային ասպարեզում տարբեր անհատների և բնակավայրերի թերացումները հիշատակող տեքստի բեկոր՝ նման **IBoT II 129**-ին: Վնասված ենթատեքստում հիշատակվում է նաև Իսուվայի արքան, որը մատուցումներ է կատարում աստվածներին *harpaš* կոչվող տոնակատարության առթիվ:

**KBo XXVII 213 (CTH? հրատ.՝ de Martino, 1992, N.14, S.47)**

Խուրրիերեն լեզվով գրված առասպելաբանական կամ ծիսական բնույթի տեքստի փոքր բեկոր: Հիշատակվում է Եփրատ գետը՝ *Ur-[.....]* գրությամբ:

**KBo XXXI 169 (CTH 646?. հրատ.՝ Քոսյան, 2002a, էջ.323-325)**

Տեքստում նկարագրվում են խեթական թագուհու (և արքայի?) կողմից իրականացված ծիսական արարողությունները, այդ թվում՝ Սուլլամա քաղաքի Իշտարի համար, որն ընթանում է խեթական տերության հարավային շրջաններից մեկում՝ մոտավորապես Հալիսի մեծ ոլորանից հարավ, հարավ-արևմուտք գտնվող հայտնի կրոնական կենտրոն Ուսսայում:

**KBo XL 342 (CTH?)**

Պատմական կամ առասպելաբանական բնույթի տեքստի փոքր բեկոր: Հիշատակվում է Մալա գետը:

**KBo XLIV 5 (CTH 213)**

Աստվածների ցուցակ: Ըստ հրատարակչի, Թուդխալիյաս IV-ի կնքած պայմանագրերից մեկին պատկանող բեկոր: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը:

**KBo XLIV 144 (CTH?)**

Աստվածներին նվիրված երկրպագություն նկարագրող տեքստի բեկոր: Հիշատակվում են Դանկուվայից բերված վեց NINDA.GUR<sub>4</sub>.RA հացերը:

**KBo XLIV 213 (CTH?)**

Հնարավոր է, պատմական տեքստի կամ գուշակային տեքստի փոքր բեկոր: Ազգիի անվան ընթերցումը ([...]a-az-zi) վստահելի չէ:

**KBo XLIV 216 (CTH 577)**

Գուշակային տեքստ, որտեղ հիշատակվում է, ի թիվս այլ բնակավայրերի, Կունմեսմախա գետի GAL MEŠEDI-ն (արքայական պալատի պահակախմբի ղեկավար):

**KBo XLV 179 (CTH? հրատ.՝ Lebrun, 1976, p.221)**

Հրահանգի տեսքով կազմված տեքստ: Թվարկվում են՝ «Իսուվայի արքայի ծառաները», «Սապուխայի (=Սամուխա) պալատի մարդիկ», Վատարունա քաղաքը:

**KUB I 12 (CTH 669. հրատ.՝ Lebrun, 1976, p.172)**

Արքայի կողմից մեծաքանակ աստվածներին տրվող երկրպագությունները նկարագրող տեքստ: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը (<sup>d</sup>IS<sup>URU</sup>STAR<sup>URU</sup>Ša-[.....]): Ծեսը ներառում է խաթերեն լեզվով կատարվող ծիսական երգ:

**KUB I 16 (CTH 6. հրատ.՝ Sommer-Falkenstein, 1938)**

Խաթուսիլի Ի-ի քաղաքական տեստամենտը՝ գրված խեթերեն և աքքադերեն:

**KUB II 1 (CTH 682. հրատ.՝ McMahon, 1991, p.96ff.)**

Այս տեքստը ներկայացնում է Խեթական տերության պահապան աստվածների ցուցակը: Հիշատակվում են Ալաթարմա քաղաքի <sup>d</sup>LAMMA և <sup>d</sup>Ala աստվածները, ինչպես նաև Վերին երկիրը:

**KUB II 13 (CTH 591. հրատ.՝ Lebrun, 1976, p.172f.)**

Արքայի կողմից մեծաքանակ աստվածներին տրվող երկրպագությունները նկարագրող տեքստ: Հիշատակվում է «Սամուխայի տիրուհին» (այսինքն Իշտարը): Ծեսը ներառում է խուրրիերեն լեզվով կատարվող ծիսական երգ (նման է KUB I 12-ին):

**KUB III 80 (CTH 216. հրատ.՝ Hagenbuchner, 1989, Nr.212, S.312f.)**

Խեթական արքային Միտաննի արքա Շաթթուարա II-ից աքքադերեն լեզվով գրված նամակ: Վնասված ենթատեքստում հիշատակվում է Իսուվան:

**KUB III 87 (CTH 216. հրատ.՝ Hagenbuchner, 1989, Nr.349, S.459f.)**

Աքքադերեն լեզվով գրված՝ պատմական բնույթի տեքստի բեկոր (պայմանագիր կամ նամակ): Վնասված ենթատեքստում հիշատակվում են Սուպպիլուլիուման (այս անունով խեթական առաջին արքան), Ալզին, նրա արքա Անտարատլին և Կումմա քաղաքի Ամպրուպի աստվածը:

**KUB III 125 (CTH 216. հրատ.՝ Hagenbuchner, 1989, Nr.251, S.359f.; Klengel, 1968, S.74 [քննարկումը])**

Աքքադերեն լեզվով գրված նամակ: Խաթթուսիլի I-ի կամ ավելի հավանական է, Թուդխալիյաս IV-ի նամակագրությունը Ասորեստանի արքայի հետ (տես **KUB XXIII 92**): Վնասված ենթատեքստում հիշատակվում են Բաբանխա երկիրը (=Պապանխա/ի) և «Իսուվայում (կամ «ղեպի Իսուվա») արտահայտությունը, ինչպես նաև ոմն Ներիկկաիլի (այս անունը կրում էր Խաթթուսիլի III-ի որդիներից մեկը):

**KUB V 21 (CTH 582)**

Գուշակային տեքստի բեկոր: Վնասված ենթատեքստում հիշատակվում է Սամուխան (կամ քաղաքը կամ այդ քաղաքի Իշտարը):

**KUB VI 15 (CTH 582. հրատ.՝ Lebrun, 1976, p.190f.)**

Գուշակային տեքստ: Թագուհին երգի տեսքով հետաքրքրվում է ինչ-որ խնդրով: Հիշատակվում են Սամուխայի Իշտարը և այլ աստվածներ:

**KUB VII 11 (CTH 678)**

Կաստամա քաղաքում արքայական զույգի կողմից կատարված ծիսակատարություն, որտեղ հիշատակվում է խիմնուվացիների մասնակցությունը աստծուն տրվող երկրպագություններին:

**KUB VIII 71 (CTH 276)**

«Կատալոգ»: Հիշատակվում է են «Սամուխայի աստվածները»:

**KUB VIII 82 (CTH 105. հրատ.՝ Kühne und Otten, 1971)**

Թուդխալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Սաուսգամուվայի պայմանագիրը (B տարբերակը): Որպես պայմանագրի կնքմանը վկա հիշատակվում է Արծիյայի Չաբաբան (այս հատվածը տուժած է):

**KUB IX 1 (CTH 427-8)**

Զինվորական երգման ծեսին պատկանող տեքստ: Հիշատակվում է հենմուվայում տեղի ունեցած ինչ-որ իրադարձություն:

**KUB XII 2 (CTH 511. հրատ.՝ Carter, 1962, p.74ff.)**

Ինվենտարային տեքստ, որտեղ հիշատակվում են տաճարում գտնվող *huwaši* կոչվող երկրպագության վայրերը՝ այնտեղ պահվող ծիսական գույքի թվարկմամբ. հիշատակվում է Հայասայի Ամպրոպի աստվածը:

**KUB XII 5 (CTH 713. հրատ.՝ Danmanville, 1962, p.51ff.)**

Տամինիզա քաղաքի Իշտար աստվածուհու ծեսը, որն ընթանում է Սամուխայում՝ թագուհու մասնակցությամբ (տես KUB XLV 32 կրկնօրինակը):

**KUB XII 43 (CTH 457)**

Մաքրագործման ծես նկարագրող տեքստի բեկոր: Վնասված ենթատեքստում հիշատակվում է հենմուվան:

**KUB XIII 2 (CTH 261. հրատ.՝ von Schuler, 1957, 36ff.)**

Թուդիսալիյաս IV-ի հրահանգները սահմանային կառավարիչներին (*bel madgalti*): Հիշատակվում են Իսուվայի, Կասսիայի, հիմնուվայի և Թեգարամայի օգնական զորաշրջակառնները:

**KUB XIV 4 (CTH 70. հրատ.՝ Bin-Nun, 1975, p.185ff. (հատված.տառադ., թարգմ. և մեկնաբ.): Cornelius, 1975, S.27ff.; de Martino, 1998, p.19ff.)**

Սուրսիլիս II-ի տեքստը՝ նվիրված խորթ մոր՝ Սուպալիլուլիոմաս I-ի վերջին կնոջ («տավանանա». թերևս, անունը՝ Ամնիննայա) գործունեությանը սև մոգության ասպարեզում: Ըստ տեքստի, արքայի հայասական արշավանքի ժամանակ (10-րդ տարում՝ Wilhelm - Böse, 1989, S.105ff. [ավելի վաղ շրջանով թվագրելու մասին եղած կարծիքների ներկայացմամբ]. նաև՝ de Martino, 1998, p.46f.) լուր է հասել տավանանայի դավադրության մասին, որը և ստիպել է արքային ընդհատել արշավանքը և ետ վերադառնալ:

**KUB XIV 8 (CTH 378.IIA. հրատ.՝ Götze, 1930c, S.161ff.; Friedrich, 1946, S.44ff. (հատված.տառադ.): Goetze, 1950, p.394ff.; Lebrun, 1980, p.203ff.)**

Սուրսիլիս II-ի աղոթքը՝ ժանտախտի համաճարակի առթիվ: Նշվում է այն մասին, որ արքան հայտնաբերել էր մի հին աղյուսակ, որը

**KUB IX 1 (CTH 427-8)**

Ձինվորական երդման ծեսին պատկանող տեքստ: Հիշատակվում է Խենմնովայում տեղի ունեցած ինչ-որ իրադարձություն:

**KUB XII 2 (CTH 511. հրատ.՝ Carter, 1962, p.74ff.)**

Ինվենտարային տեքստ, որտեղ հիշատակվում են տաճարում գտնվող *huwaši* կոչվող երկրպագության վայրերը՝ այնտեղ պահվող ծիսական գույքի թվարկմամբ. հիշատակվում է Հայասայի Ամպրոպի աստվածը:

**KUB XII 5 (CTH 713. հրատ.՝ Danmanville, 1962, p.51ff.)**

Տամինինգա քաղաքի Իշտար աստվածուհու ծեսը, որն ընթանում է Սամուխայում՝ թագուհու մասնակցությամբ (տես KUB XLV 32 կրկնօրինակը):

**KUB XII 43 (CTH 457)**

Մաքրագործման ծես նկարագրող տեքստի բեկոր: Վնասված ենթատեքստում հիշատակվում է Խենմնովան:

**KUB XIII 2 (CTH 261. հրատ.՝ von Schuler, 1957, 36ff.)**

Թուդիսալիյաս IV-ի հրահանգները սահմանային կառավարիչներին (*bel madgalti*): Հիշատակվում են Իսուվայի, Կասսիայի, Խիմնովայի և Թեգարամայի օգնական զորաջոկատները:

**KUB XIV 4 (CTH 70. հրատ.՝ Bin-Nun, 1975, p.185ff. (հատված.տառադ., թարգմ. և մեկնաբ.): Cornelius, 1975, S.27ff.; de Martino, 1998, p.19ff.)**

Սուրսիլիս II-ի տեքստը՝ նվիրված խորթ մոր՝ Սուպալիլուլիումաս I-ի վերջին կնոջ («տավանանա». թերևս, անունը՝ Ամմիննայա) գործունեությանը սև մոգության ասպարեզում: Ըստ տեքստի, արքայի հայասական արշավանքի ժամանակ (10-րդ տարում՝ Wilhelm - Böse, 1989, S.105ff. [ավելի վաղ շրջանով թվագրելու մասին եղած կարծիքների ներկայացմամբ]). նաև՝ de Martino, 1998, p.46f.) լուր է հասել տավանանայի դավադրության մասին, որը և ստիպել է արքային ընդհատել արշավանքը և ետ վերադառնալ:

**KUB XIV 8 (CTH 378.IIA. հրատ.՝ Götze, 1930c, S.161ff.; Friedrich, 1946, S.44ff. (հատված.տառադ.): Goetze, 1950, p.394ff.; Lebrun, 1980, p.203ff.)**

Սուրսիլիս II-ի աղոթքը՝ ժանտախտի համաճարակի առթիվ: Նշվում է այն մասին, որ արքան հայտնաբերել էր մի հին աղյուսակ, որը



**KUB XVI 16 (CTH 570. հրատ.՝ den Hout, 1998, S.138ff.)**

Գուշակային բնույթի տեքստ, որտեղ ասվում է, որ Իսուվայի արքան թերացել է կատարել իր պարտականությունները՝ տոնակատարության ժամանակ աստծուն երկրպագելու հարցում:

**KUB XVI 17 (CTH 570. հրատ.՝ Lebrun, 1976, p.194)**

Գուշակային տեքստ: Հիշատակվում են Սամուխա քաղաքը և Սամուխայի Իշտարը (վերջինս՝ պակասավոր գրությամբ՝ <sup>URU</sup>IS[TAR]a-Samuha):

**KUB XVI 35 = IBoT II 129 (Տես «Տեքստեր. I»):**

**KUB XVI 36 (CTH 572)**

Գուշակային տեքստ: Հիշատակվում է Սամուխա քաղաքը (<sup>URU</sup>IS]a-mu-ha). հնարավոր է, խոսքը Սամուխայի Իշտարի մասին է:

**KUB XVI 43 (CTH 572)**

Գուշակային տեքստ: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը:

**KUB XVI 57 (CTH 572)**

Գուշակային տեքստ: Հիշատակվում է Սամուխա քաղաքը:

**KUB XVI 80 (CTH 572)**

Գուշակային տեքստ: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը (<sup>d</sup>LIŠ dnu):

**KUB XVII 9 (CTH 362. հրատ.՝ Güterbock, 1939, S.84ff.)**

Գուրպարանցախի մասին պատմող խուրրիական ծագման դիցաբանական տեքստ: Այս անվան մեջ ներկայացված է Տիգրիս գետի անձնավորված անունը:

**KUB XVII 21 (CTH 375. հրատ.՝ von Schuler, 1965, S.152ff.)**

Առնուվանդաս I-ի և թագուհի Ասմունիկկալի աղոթքը՝ Ներիկ քաղաքի առնչությամբ: Հիշատակվում են կասկերի հարձակումներից տուժած մեծաքանակ քաղաքներ, այդ թվում՝ Խիմնուվան:

**KUB XVIII 2 (CTH 579. հրատ.՝ Klinger, 1998, S.106f.:)**

Գուշակային հարցում, որի միջոցով խեթական արքան փորձում է տեղեկանալ Ազգիի արքա Խուկկանայի ապագա լոյալության մասին իր և իր սերունդների հանդեպ: Ըստ հրատարակչի, տեքստի նշանները

միանշանակ վկայում են դրա ուշ թվագրման օգտին: Պահպանվել է մ.թ.ա.XIII դարի օրինակով:

**KUB XVIII 8 (CTH 580. հրատ.՝ Lebrun, 1976, p.194f.)**

Գուշակային տեքստ: Հիշատակվում է Սամուխայի Իշտարը:

**KUB XIX 9 (CTH 83.1, հրատ.՝ Riemschneider, 1962, S.115ff.)**

Սոււպիլուլիումաս I-ի արշավանքները նկարագրող տեքստ (կազմված է Խաթթուսիլի III-ի օրոք): Արքայի սիրիական արշավանքների առնչությամբ հիշատակվում է, որ նա սահման էր դարձրել Մալա գետը:

**KUB XIX 20 (CTH 154. հրատ.՝ den Hout, 1994, S.60ff.)**

Սոււպիլուլիումաս I-ի նամակը եգիպտական փարավոնին. հիշատակվում են խեթական արքայի նվաճումները նամակի առաքմանը նախորդող շրջանում: Վնասված ենթատեքստում պահպանվել են Հայասան և Ալզին:

**KUB XIX 23 (CTH 192. հրատ.՝ Hagenbuchner, 1989, Nr.18, S.27ff.)**

Նամակ արքայազն Թուդիալիյասից (ապագա արքա Թուդիալիյաս IV): Շարադրվում են ռազմական գործողությունները Վերին երկրում, որի վրա հարձակվել էին թշնամիները: (հակառակորդի անվանումը պարունակող հատվածը վնասված է): Այնուհետև ասվում է, որ «նա մոտեցել է Սամուխա քաղաքին» (կրկին պարզ չէ թե ում մասին է խոսքը):

**KUB XIX 50 (CTH 69. հրատ.՝ Beckman, 1996, Nr.12, p.77ff.)**

Պայմանագիր Սուրսիլիս II-ի և Սեխայի արքա Մանապաթրիսունտասի միջև: Որպես պայմանագրի կնքմանը վկաներ հիշատակվում են Պիտոյարիգայի և Սամուխայի Ամպրուպի աստվածները, Արծիայի Չաբաբան և Սամուխայի Աբարան:

**KUB XX 26 (տես KBo XI 28)**

**KUB XXI 1 (CTH 76)**

Պայմանագիր Սուվատալիս II-ի և Վիլուսայի արքա Ալաքսանդրոսի միջև: Որպես պայմանագրի կնքմանը վկաներ հիշատակվում են Սամուխայի Ամպրուպի աստվածը և Արծիայի Չաբաբան:

**KUB XXI 15 – Տես KBo VI 29.**

**KUB XXI 17 (CTH 86. հրատ.՝ Lebrun, 1976, p.144ff.; Götze, 1929, S.832ff.)**

Խաթթուսիլի III-ի տեքստը, որտեղ նկարագրվում են նրա և Արմա-թարխունտասի թշնամական հարաբերությունները: Ասվում է, որ երբ Մուվատալլիս II-ը Խաթթուսիլիսին նշանակեց Վերին երկրի կառավարիչ, ապա Արմա-թարխունտասը սկսեց նրան վարկաբեկել արքայի մոտ, սակայն Սամուխայի Իշտարը (գրված է <sup>4</sup>LIŠ և <sup>4</sup>STAR ձևերով) օգնում էր Խաթթուսիլիսին: Վերջինս Արմա-թարխունտասի տունը (նկատի ունի կալվածքը?) նվիրել էր աստվածուհուն:

**KUB XXI 29 (CTH 89. հրատ. von Schuler, 1965, S.145ff.)**

